ինձ ողորմեսցի եւ ստացողին ամեն», իսկ մյուս լուսանցքում. «Յիսուս Քրիստոս, աւգնեա Աստուածածատրս բարի պատրոնի եւ ողորմեա նկարողի»[74]։ Սա նկարողն է գրել։ Այդ տառաձևերով հն գրված նաև բազմաթիվ գլխագիր զարդագրերի մեջ հանդիպող հիշատակագրությունները, ուր հիշվում են գրիչն ու ստացողը։ 6ա և 9բ էջերի զարդագիր Զ-ի մեջ համապատասխանաբար գրված է «Վարդան յիշեսցի ի տէր» և «Աստուած ողորմեա աշխատողաց»։ 495ա էջում զարդագիր Ա-ի մեջ՝ «Աստուածատուր յիշեսցի ի տէր և գրագիրն» վերջի բառերը բոլորգիր են։ Բոլորգիր է նաև 489բ էջում դարձյալ Ա զարդագրի մեջ գրված «Աստուածատուր պատրոն յիշեսցի ի տէր և Վարդան» հիշատակագրության «Աստուածատուր» բառը։ Այդ նույն տառերով են գրված Ա—ԿԵ պրականիշերը և որոշ սրբագրություններ[75], որոնք դարձյալ Ստեփանոսի ձեռքի գործն են և ոչ ուրիշի։ Այլապես անհասկանալի կլիներ, թե ինչու այդ ուրիշը պետք է սրբագրեր ծաղկողի տառերով։ Իսկ որ ծաղկողները հաճախ նաև սրբագրում էին ձեռագրերը, շատ փաստեր ունենք։ Ահա մեկը. «ով իմ հոգևոր հայր, ծաղկելու ժամանակն լաւ միտ դնես զգրչիս պակասն և զմտացս»[76]։ Ինքնատիպ է նաև պրականիշերը գրելու եղանակը. ծաղկողը ցանկացել է ուրիշին չկրկնել։ Պրակի առաջին նիշը դրել է ոչ թե ստորին լուսանցքի կենտրոնում, ինչպես սովորաբար արվում է, այլ վերին լուսանցքի աջ անկյունում, բացառությամբ Ա-ի (էջի վերին անկյունը նկարազարդ է)։ Այդպես՝ մինչև ԿԶ պրակը, որից հետո գրված է սովորական բոլորգրով։ Ստեփանոսը կատարել է բոլոր լուսանցազարդերը և գլխազարդ-կիսախորանները։ Նա կատարել է նաև անկյունազարդեր և սյունամիջյա լուսանցազարդեր, որ արժանի են ուշադրության։ Հիմնական գույներն են «բոցագույն» կարմիր, կապույտ, կանաչ և սպիտակ։ Գլխազարդերում օգտագործել է նաև ոսկու փոշի, լուսանցազարդերի որոշ մոտիվները կրկնվում են գլխազարդ կիսախորանում։ Մեծ մասամբ բուսական և երկրաչափական զարդեր են, միայն մի քանի թռչնազարդեր կան, մյուսները հավանաբար պատռված-հանված են ձեռագրից։ Ստեփանոսն է գրել նաև բոլոր գլխագիր զարդագրերը՝ գունավոր և անգույն, վերջիններիս մեջ՝ նաև հիշատակագրությունները։ Այս ամենը ցույց է տալիս, որ Տօնականը Ստեփանոսը ծաղկել է Ավագ վանքում։ Ծաղկողը նախ պրականշել է, ապա զարդագրել (ոչ բոլոր գլխագրերը) և զարդանկարել՝ զարդերը դնելով յուրաքանչյուր գլխի հանդեպ։ Հազվադեպ են նրանք կրկնվում, և ամեն մեկը մի ավարտուն նկար է. այնպես որ, չնայած ձեռագրի լուսանցքների մեծությանը, որևէ անկյունում դրված լուսանցազարդը մեղմացնում է մագաղաթի մարմարյա սառնությունը և լցնում է ամբողջ էջը ջերմությամբ։ Այս նույն Ստեփանոսն է նկարազարդել նաև Վարդանի 1200 թ. ընդօրինակած Աւետարանը և կատարել մասնակի սրբագրություններ։ Այդ Ստեփանոսը Ավագ վանքի միաբան Ստեփանոս գրչի հիշած «շնորհազարդեալ քահանայ Ստեփանոսն» է։

Մեր այս կարծիքի օգտին է խոսում Գարեգին Լևոնյանի մի վկայությունը։ Ստեփանոսի 1201 թ. Ավագ վանքում ավարտած Ավետարանը մինչև վերջերս գտնվում էր Փարիզում (ներկայումս Մաշտոցյան մատենադարան, ձեռ. № 10359)։ Մեղ թվում է, այդ ձեռագիրը նկատի ունի Գ. Լևոնյանը, երբ գրում է. «13-րդ դարի առաջին իսկ տարիներին գրվել ու պատկերազարդվել են երկու

74 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 3ա։

75 Անդ, էջ 6բ, 9բ, 495ա, 498բ, 508բ և այլն։

76 Ա. Սյուրմեյան. Յուցակ Հալէպի, էջ 69։